ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<21.10.2025թ>> Գեղարքունիքի մարզ, Վարսեր բնակավայր

Սույն թվականի հոկտեմբերի 21-ին, ժամը 12:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնքի Վարսեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցե՝ գ. Վարսեր, 7-րդ փողոց, շենք 11) տեղի ունեցավ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /03.05.2024թ. ՀՕ-150-Ն/ և ՀՀ կառավարության 2023թ դեկտեմբերի 28-ի <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր Սևան-Երևան մայրուղի 54-55կմ 66 հողամաս հասցեում հեղուկ վառելիքի կայանի կառուցման նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

Ելույթ ունեցան՝

Ս. Սեդրակյան

Ողջունեց հանրային քննարկումների մասնակիցներին և հայտարարեց հանրային քննարկումները բացված:

Գ. Պողոսյան

Ներկայացրեց հեղուկ վառելիքի կայանի կառուցման աշխատանքային նախագիծը, նշեց նախատեսվող գործունեության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները և ինժեներական լուծումները:

Ա. Գալոյան

Ներկայացրեց Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Նշեց, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կմշակվի համապատասխան Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջների համաձայն:

Ներկայացրեց նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր բացասական և դրական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա՝ մասնավորապես փոշու, ածխածնի, օքսիդի և ազոտի երկօքսիդի առաջացման աղբյուրները և այդ ազդեցությունները մեղմացնող միջոցառումները:

Հանրային քննարկումների ընթացքում տեղի ունեցավ նաև մտքերի փոխանակում, բարձրացվեցին հարցեր շինաշխատանքների կազմակերպման, տարածքի մոտեցումների, տարածքում հնարավոր ծառահատումների, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների, նախատեսվող բնապահպանական միջոցառումների վերաբերյալ և այլն, որոնց վերաբերյալ կողմերը տվեցին ապառիչ պատասխաններ:

Նախագահող՝ Է. Փամբուկյան

Բնակավայրի ղեկավար՝ Ս. Սեդրակյան